ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆ
(ծննդյան 90-ամյակին)

Դեռ վաղ ժամանակներում հայերը եղել են հայտնի կառուցողներ, ունեցել են հմուտ քարգործ վարպետներ, բարձրաճաշակ ճարտարապետներ: Եվ այդ հայտնի է եղել նաև Հայաստանից դուրս՝ հարևան և հեռավոր երկրներում, ուր որ գործադրություն է գտել հայերի կառուցողական գործունեությունը: Մի դեպքում վարպետները մեկնել են իրենց ցանկությամբ՝ գործ որոնելու, ընտանիքի ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով, մյուս դեպքում նրանք տարվել են զանազան առիթներով՝ պարտադրաբար:

Հայտնի է, որ դեռևս 7-րդ դարում ճարտարապետ և քանդակագործ Թոդոսակը ապրել ու գործել է Վրաստանում ու Գորիից ոչ հեռու, Թանա գետափնյա բարձրադիր վայրում կառուցում է Ատենի Սիոն հայտնի տաճարը:

15-16-րդ դարերի ընթացքում հայազգի մեծանուն Սինան ճարտարապետը գերազանցապես Թուրքիայում ու նաև հարևան երկրներում կառուցում է շուրջ 360 նշանավոր շինություններ՝ պալատներ ու մզկիթներ, մեծաթռիչք կամուրջներ:

16-րդ դարում օսմանյան ու եվրոպական ճարտարապետության իմաստով Սինանը համարվում է հույժ տաղանդավոր, նրա գործերը՝ օսմանյան ճարտարապետության զարգացման գագաթնակետը:

18-19-րդ դարերի ընթացքում Թուրքիայում գործում էին հայազգի Պալյան արվեստագետների մեծ գերդաստանի ճարտարապետները, այդ թվում Քալֆա, Սենեքերիմ, Կարապետ, Ավագ և կրտսեր Նիկողոս, Սարգիս, Հակոբ, Սիմոն, Լևոն Պալյանները, որոնք սերնդե-սերունդ՝ ժառանգաբար, դարձել էին սուլթանների պալատական ճարտարապետները և կառուցում էին երկրի գրեթե բոլոր կարևորագույն շինությունները՝ մզկիթները ու պալատները, զինվորական հաստատությունները, ջրապատնեշներն ու կամուրջները, պահեստները:

Հայ ճարտարապետներ են գործել Եվրոպայում ու Ռուսաստանում: Մեր դարի առաջին տասնամյակներում ռուսական կայսրության ընդարձակ տարածքում

աշխատում էին մեծ թվով ճարտարապետ-ճարտարագետներ, այդ թվում այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, պրոֆեսոր Նիկողայոս Բունիաթյանը և ուրիշներ:

Այս վերջիններս Մոսկվայում և այլ վայրերում բազմաթիվ կառույցներ իրականացնելուց հետո միայն վերադարձան հայրենիք՝ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով:

Երեսունական թվականներին Սովետական Միության մայրաքաղաքում աշխատող զգալի թվով հայ ճարտարապետների շարքում առանձնանում էր համբավավոր ճարտարապետ, ակադեմիկոս Կարո Հալաբյանը:

Մեր երկրի մամուլում շատ է գրվել Կարո Հալաբյան ճարտարապետի, մարդու, կազմակերպչական մեծ ընդունակություններով օժտված գործչի մասին. մեր Սփյուռքում, սակայն, համեմատաբար քիչ գիտեն այդ մեծատաղանդ ճարտարապետի կյանքի և գործունեության վերաբերյալ: Ահա այդ բացը գեթ փոքր չափով փորձում ենք լրացնել այս հոդվածով:

Կարո Սիմոնի Հալաբյանը ծնվել է 1897 թ. հունիսի 27-ին նախկին Ելիզավետպոլ (այժմ՝ Կիրովաբադ) քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, բարձրագույնը՝ Մոսկվայի գեղարվեստա-տեխնիկական ինստիտուտում (ВХУТЕИН-ում – Высший художественно-технический институт), ավարտելով այն 1929 թվականին:

Մինչև 1931 թ. աշխատում է Հայաստանում, ուր գլխավորում է Պետական նախագծային ինստիտուտը, ճարտարապետներ Գևորգ Քոչարի և Միքայել Մազմանյանի հետ նախագծում մի շարք բնակելի և հասարակական շենքեր, որոնք կառուցվում են Երևանում: Այնուհետև Հալաբյանը մեկնում է Մոսկվա, ապրում ու աշխատում այնտեղ շուրջ 28 տարի, մինչև իր կարճատև կյանքի ավարտը՝ 1959 թ. մայիսի 1-ը:

Կարո Հալաբյանը եղել է բազմաշնորհ անձնավորություն. նա նկարիչ էր, քանդակագործ, թատերական ներկայացումների ձևավորող (հատկապես Սունդուկյանի անվան թատրոնում): Նա ստեղծել է Կարլ Մարքսի, Ստեփան Շահումյանի,

Սիմոն Տեր-Պետրոսյանի՝ Կամոյի դիմաքանդակները: 1924 թ. բնականից նկարել է Լենինին՝ դագաղում պառկած: Նկարազարդել է Եղիշե Չարենցի գործերը, ստեղծել երգիծական գծանակարների շարք: Հալաբյանը Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ էր, ճարտարապետության դոկտոր, ՍՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի իսկական անդամ, նույն ակադեմիայի փոխ-պրեզիդենտ:

Դեռևս 1929 թվականին Կարո Հալաբյանը հիմնադրում է պրոլետարական ճարտարապետների համառուսաստանյան ընկերությունը (ВОПРА), 1932 թվականին Հալաբյանի ակտիվ մասնակցությամբ ստեղծվում է ՍՍՀՄ Սովետական ճարտարապետների միությունը, որի հիմնադրման օրվանից մինչև 1950 թվականը մնում է նրա պատասխանատու քարտուղարը: Այդ տարիներին ՍՍՀՄ ճարտարապետների միությունը մեծ վերելք է ապրում ու մեծ նշանակություն ձեռք բերում երկրի շինարարական կյանքում: Հալաբյանը հիմնադրում է նաև «Ճարտարապետական ֆոնդը», որից ստացվող միջոցներով ստեղծում է մի շարք հանգստյան և ստեղծագործության տներ ճարտարապետների համար:

Կարո Հալաբյանը հիմնադիրներից մեկն է նաև ճարտարապետների միջազգային կազմակերպության, նրա ակտիվ գործիչներից և մշտական փոխնախագահը Սովետական Միությունից: Նա 1936 թ. ընտրվում է Ճարտարապետների Բրիտանական թագավորության ինստիտուտի պատվավոր թղթակից-անդամ:

Հայրենական պատերազմի տարիներին Հալաբյանը ղեկավարում է Ճարտարապետության ակադեմիայի իր իսկ ստեղծած այն արվեստանոցը, որը զբաղվում էր արդյունաբերական և պաշտպանական վերգետնյա կառույցների ու վայրերի քողարկման նախագծման գործով:

Իր հասարակական մեծ գործունեությունը նա հմտորեն համատեղում էր ստեղծագործական և գիտական գործունեությանը: Երեսնական թվականների սկզբնեբում իր գործընկերների հետ ակտիվորեն մասնակցում էր երկրում կարևորագույն շինու-թյունների նախագծման մրցույթներին, այդ թվում Խորհուրդների պալատի մրցույթի բոլոր հերթերում, ստանալով բարձր կամ առաջնակարգ տեղ: Մրցույթներից

մեկում շահելով առաջին մրցանակ Վ. Սիմբիրցևի հետ նախագծում է Կարմիր բանակի թատրոնի շենքը (պալատը) Մոսկվայում և հսկում նրա կառուցմանը:

Ակադեմիկոս Բ. Իոֆանի հետ նախագծում է Նյու-Յորքի միջազգային ցուցահանդեսի սովետական տաղավարը, ապա և կառուցում է այն, որի համար էլ 1939 թ. արժանանում է Նյու-Յորքի պատվավոր քաղաքացու կոչման: Նույն 1939 թվականին Սամվել Սաֆարյանի հետ նախագծում է հայկական տաղավարը ՍՍՀՄ գյուղատնտեսական ցուցահանդեսում, իսկ 1954 թվականին ստեղծում նրա վերակառուցման նախագիծը:

Երբ դեռ շարունակվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, սակայն ազատագրվել էր Ստալինգրադը, Կարո Հալաբյանը, իր ղեկավարած ստեղծագործական խմբի հետ, որի կազմում էր նաև ճարտարապետ Ն. Պոլյակովը, 1943 թվականին, մրցույթում շահելով առաջին մրցանակը, ստեղծում է այդ մեծ ու կարևոր քաղաքի վերականգնման գլխավոր հատակագիծը: 1950-1951 թվականներին ճարտարապետ Լեոնիդ Կառլիկի հետ նախագծում է Սոչիի ծովային կայարանը, որն իրականանում է 1954 թվականին:

Լինելով ճանաչված քաղաքաշինարար Հալաբյանի ղեկավարած արվեստանոցին է հանձնարարվում Մոսկվայի 3500 հեկտար տարածություն զբաղեցնող Լենինգրադյան շրջանի կառուցապատման նախագծի կազմումը: Այդ պատասխանատու ու պատվավոր աշխատանքում նա դնում է իր նորարարի շնորհքն ու գիտելիքները: Ահա այդ շրջանի նշանակալից փողոցներից մեկը այժմ կրում է Կարո Հալաբյանի անունը:

Նույն արվեստանոցին է հանձնարարվում Մոսկվայի մի այլ շրջանի՝ Խիմկի-Խովրինոյի հատակագծումը: 1500 հեկտար տարածությամբ բարդությամբ բնորոշ այդ քաղաքամասի հատակագծումը, իրականացված Հալաբյանի անմիջական մասնակցությամբ, իր ժամանակին արժանացել է բարձր գնահատականի: Տվյալ շրջանի կառուցումը սկսվել է 1962 թվականից և շարունակվում է: Շրջանի կենտրոնում առանձնացված մի մեծ տարածություն վեր է ածվել «Բարեկամության այգու», որի

ծառատնկումը ի կատար է ածվել 1957 թվականին Մոսկվայում տեղի ունեցած Երիտասարդների և ուսանողների միջազգային ֆեստիվալի մասնակիցների կողմից:

Հետպատերազմյան տարիներին Մոսկվայում մասսայաբար կառուցվող բնակելի շենքերում ընտանիքների բնակեցումը կրում էր սենյակային բնույթ, այսինքն՝ ամեն ընտանիք ստանում էր մեկ, կամ երկու սենյակ, իսկ սպասարկող մասը՝ խոհանոցն ու սանհանգույցը, ընդհանուր էին բոլորի համար:

Կարո Հալաբյանը ըմբռնելով այդ անհարմարությունը, հանդես է գալիս նոր առաջարկությամբ: Նրա մշակած հատուկ նախագծով ՍՍՀՄ-ում սկիզբ է առնում ընտանիքների բնակեցումը մեկուսացված բնակարաններում: Ճանաչում ու հաստատում ստացած այդ սիստեմով էլ այժմ բնակելի շենքեր են կառուցվում Սովետական Միության ողջ տարածքում:

Կարո Հալաբյանը օժտված էր նաև մի այլ շնորհով. նա խմբագրում էր ճարտարապետության վերաբերյալ զգալի թվով գիտական աշխատություններ, ինչպես և «Տեղեկատուներ» քաղաքաշինությանը, ճարտարապետությանը, շինանյութերի ու նրանց գործադրության ձևերի վերաբերյալ:

Տարիներ շարունակ՝ 1933-1941 թվերի ընթացքում, որպես գլխավոր խմբագիր, հրատարակում էր «ՍՍՀՄ ճարտարապետությունը» ամսագիրը: Պատերազմի տարիներին գլխավոր խմբագիրն էր «Պատերազմի ժամանակվա շինարարություն» հանդեսի (1-6 համարները): 1942-1947 թվականների ընթացքում խմբագրում է «ՍՍՀՄ ճարտապետություն» ժողովածուն:

Ճարտարապետների Սովետական Միության համագումարներում, ինչպես և միջազգային կոնգրեսներում Կարո Հալաբյանի ունեցած զեկուցումների ու ելույթների, ինչպես և գիտական աշխատությունների ու հոդվածների թիվը հասնում է մոտ 150-ի: 155-ի է հասնում այն հոդվածների և աշխատությունների թիվը, որոնցում ճարտարապետության մասնագետները խոսում են Կարո Հալաբյանի ճարտարապետական գործերի և ծավալած հասարակական գործունեության վերաբերյալ: Այս ամենը ամփոփված է անվանի ճարտարապետ Լեոնիդ Կարլիկի «Ճարտարապետ Կարո Հալաբյան»

գրքում, որ ռուսերեն լեզվով լույս է ընծայվել 1966 թվականին ճարտարապետ Միքայել Մազմանյանի խմբագրությամբ: Այնտեղ են ի մի բերված Հալաբյանի ժամանակակից մեծանուն ճարտարապետների հուշերը, նվիված հմայիչ մարդու, մեծ ճարտարապետ, անզուգական կազմակերպիչ, ստեղծագործական միության հմուտ ղեկավար Կարո Հալաբյանին, որին ջերմորեն սիրում էին, ըստ արժանավույն հարգում, ու գործունեությունը բարձր գնահատում: Նրա կյանքից հետո անցած քառորդ դարի ընթացքում նրան միշտ հիշել, ու շարունակաբար խոսում են այն մեծ դրականի մասին, որ կար Հալաբյան մարդու մեջ: